111 90

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող

Արամ Մեյմարյան

«01» 10 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 233 - 25

Նախաձեռնող՝ *«ԱՐՏ ՍԱՆԴ» ՍՊԸ*
Շահումյան, Արցախի 5

Գործունեությունը՝ *Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Արտսանդ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն*
Արարատի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 233 - 25

«01» հոկտեմբեր 2025 թ.

Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Արտսանդ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Արտ Սանդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակ՝	Բ կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք Շահումյան բնակավայր

Ներածական մաս. «Արտ Սանդ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Արտսանդ» տեղամասում (այսուհետ՝ տեղամաս) երկրաբանական ուսումնասիրության իրականացման աշխատանքների փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունը, համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական տարածքում:

Նկարագրական մաս. Շահումյանի ԱԿԽ հանքավայրի «Արտսանդ» տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական տարածքում, Շահումյան գյուղից մոտ 2-2,5 կմ դեպի հարավ, Արտաշատ քաղաքից մոտ 4,5 կմ դեպի հարավ-արևելք, Արաքս գետից նվազագույնը 0,9 կմ դեպի հյուսիս-արևելք, 815-820 մ բացարձակ բարձրության վրա: Հայցվող տարածքը գտնվում է 25,5 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի սահմաններում (ծածկագիր՝ 03-074-0257-0001) և զբաղեցնում է այդ հողամասի գերակշիռ մասը՝ մոտ 24,3469 հա:

Տեղամասը կապված է բնակավայրերի հետ գրունտային-խճապատ և ասֆալտապատ ավտոճանապարհներով, Արտաշատ քաղաքի հետ՝ մոտ 5 կմ երկարությամբ ավտոճանապարհով, Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-ԻԻՀ սահման միջպետական

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նշանակության ճանապարհին՝ մոտ 2,5 կմ երկարությամբ խճապատ ավտոճանապարհով: Տեղամասից ավելի քան 20 մ հեռավորությամբ անցնում են ցամաքուրդային ջրանցքներ կամ առուներ, որոնք տեղամասից բաժանվում են բարձրադիր ճանապարհով և պատվարով: Տեղամասից մոտ 10 մ հեռավորության վրա անցնում են էլեկտրահաղորդման գծեր, իսկ հարևանությամբ գտնվող գրունտային ճանապարհի եզրով անցնում է 50 մմ տրամագծով (կենցաղային) գազատար խողովակ:

Հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով ներկայացված է ստորև՝

	X	Y
1	4419677.32	8462396.25
2	4419955.22	8462445.56
3	4419853.86	8462878.81
4	4419085.75	8462779.02
5	4419496.63	8462498.80
1	4419677.32	8462396.25

Նախատեսվում է ավազակոպճային խառնուրդն ուսումնասիրել որպես շինարարական հումք՝ ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար» ԳՈՍ 8736-2014-ի տեխնիկական պայմանների, «Խիճ կոպիճից շինարարական աշխատանքների համար» ԳՈՍ 10260-82 տեխնիկական պայմանների: Համաձայն ՏԿԵ նախարարի 2021 թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանով ամրագրված «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» ցուցումների, հայցվող երևակումը նախնական գնահատմամբ երկրաբանական կառուցվածքի բարդությամբ դասվում է ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի 1-ին խմբին՝ ավազի և ավազակոպճագլաքարային ապարների ալյուվիալ հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի կայուն կառուցվածքով, հզորությամբ և որակով:

Շրջանը գտնվում է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում՝ Արտաշատ քաղաքից դեպի հարավ-արևելք, բնութագրվում է համեմատաբար պարզ երկրաբանական կառուցվածքով, որտեղ գերակշռում են նեոգեն-չորրորդական հասակի նստվածքային և լավային առաջացումները: Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով գետահուներում կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր հաստվածքներ: Տեղամասի տարածքում, ըստ նախնական դիտարկումների, գրունտային ջրերի հորիզոնները գտնվում են 1-3 մ խորությունների վրա: Ջրերի նվազագույն մակարդակը դիտվում է ամռան երկրորդ կեսին և վաղ գարնանը: Թեև տեղամասի մակերեսը ջրազուրկ է, սակայն ջրերի կապիլյար բարձրացման հետևանքով տեղամասի ԱԿԽ զանգվածը նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին) գտնվում է խոնավ վիճակում: Տեղամասի տարածքում առկա են դեռևս խորհրդային տարիներին կառուցված ցամաքուրդային (դրենաժային) համակարգի մաս կազմող կիսաքանդ, չօգտագործվող հորեր և առուներ: Դրանք անցկացվել, օգտագործվել և կիրառական նշանակություն են ունեցել բացառապես այն ժամանակ, երբ

տարածքը հանդիսացել է վարելահող: Հետագայում, հողերի աղակալման և բերրիության անկման հետևանքով, հողամասը վերածվել է արոտավայրի և ցամաքուրդային (դրենաժային) համակարգի մաս կազմող հորերն ու առուները կորցրել են իրենց նշանակությունը և ժամանակի ընթացքում աստիճանաբար քանդվել:

Տեղամասի ինժեներաերկրաբանական, լեռնատեխնիկական և ջրաերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում:

Ըստ հաշվետվության՝ տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Շահումյանի ԱԿԽ հանքավայրի «Արտսանդ» տեղամասի տարածքում կարմիրգրքյան տեսակներ չեն դիտարկվել: Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկության՝ տեղամասի սահմաններում և հարակից տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Շահումյանի ԱԿԽ հանքավայրի «Արտսանդ» տեղամասը գետահունային առաջացումների մի մասն է: Տեղամասի շրջակայքում նախկինում կատարված հետազոտությունների տվյալներով ԱԿԽ և մակաբացման շերտի ընդհանուր հզորությունը սպասվում է մինչև 10 մ սահմաններում, որի հատակում սպասվում են գլաքարա-կոպճային առաջացումներ կավի բավական բարձր պարունակությամբ:

Տեղանքի ռելիեֆը հարթ է և տեղամասի հետախուզումը նախատեսվում է իրականացնել հետախուզահորերի և հորատանցքերի միջոցով: Հետախուզահորերով նախատեսվում է որոշել ավազները ծածկող հողաբուսական և կավային բերվածքային շերտի հզորությունը հորատանցքերի անցումից հետո, ինչպես նաև իրականացնել մինչև 5 մ խորության վրա տեղադրված ավազների ստուգիչ նմուշարկում:

Նախատեսվում է կատարել հորատման աշխատանքներ: Հորատումը կատարվելու է շնեկային կամ երկսյունակային եղանակով՝ 93-150 մմ տրամագծով, քանի որ ԱԿԽ-ն ջրհեղված վիճակում է: Նախատեսվում է անցնել 8-12 մ խորությամբ 14 հորատանցք՝ յուրաքանչյուրը՝ 10 գծ.մ, ընդհանուր՝ 140 գծ.մ երկարությամբ: Թվով 4 հորատանցքերի նմուշարկումը 0-5 մ միջակայքերում նախատեսվում է ստուգաչափել հետախուզահորերի անցկացմամբ և նմուշարկմամբ: Վերցված բոլոր 4 ակոսային և 18 հանուկային նմուշները (ընդհանուր 22 նմուշ) պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների: Հորատումը նախատեսվում է իրականացնել ինքնագնաց հորատման հաստոցի միջոցով, որի տեղադրման համար հարթակների կառուցում չի նախատեսվում: Հետախուզահորերի կտրվածքը նախատեսվում է 1,6 մ^2: Օգտակար հաստվածքի նմուշարկումը հետախուզահորերից նախատեսվում է ակոսային նմուշների միջոցով՝ 10 սմ x 20 սմ կտրվածքով՝ եթե փորվածքը ջրհեղված վիճակում չէ, հակառակ դեպքում՝ յուրաքանչյուր մետրից հանված զանգվածից համախառն ձևով՝ վերջում միավորելով 1 նմուշի մեջ: 4 հետախուզահորերի ընդհանուր մակերեսը կկազմի 6,4 մ^2: Փորվածքներից ընդհանուր հեռացման ենթակա ապարների ծավալը կկազմի 32 մ^3:

Աշխատանքներն իրականացնելիս բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատակիցների կոմունալ-կենցաղային կարիքների և խմելու համար: Խմելու ջուրը բերվելու է 22երով: Կոմունալ-կենցաղային ջրօգտագործման արդյունքում առաջանալու են կեղտաջրեր,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

որոնց հեռացման համար տեղամաս է բերվելու կեղտաջրերի հավաքման բաք՝ անթափանց հատակով և պատերով: Այն տարածքից հեռացվելու է 1-2 օր տևողությամբ դաշտային աշխատանքների ավարտից անմիջապես հետո: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են կարճ ժամանակահատվածում, տարածքի բարձր խոնավության պայմաններում ջրցան չի նախատեսվում, քանի որ տարածքում գրունտային ջրերի մակարդակը բավականին բարձր է, հետևապես, տեխնիկական ջրի օգտագործում չի նախատեսվում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն՝ նախատեսվում է իրականացնել հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ,
2. աղմուկի մակարդակի վերահսկողություն,
3. նավթամթերքներով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,
4. հարակից ջրանցքի ջրերի որակի մշտադիտարկում,
5. համապատասխան մասնագետների կողմից կենսաբազմազանության մշտադիտարկում:

Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է մասնահանել 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ առաջանալու դեպքում իրականացվելու են լրացուցիչ միջոցառումներ (ըստ իրավիճակի):

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Շահումյան) իրականացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները հավանության են արժանացրել երկրաբանական ուսումնասիրությունների իրականացումը: Հանրային լսման ընթացքում նախաձեռնողը պարտավորվել է ինչպես երկրաբանահետախուզական աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում աշխատակիցներ ներգրավել համայնքից, ինչպես նաև աջակցել ազդակիր համայնքին: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով կստեղծվեն նոր աշխատատեղեր, որտեղ կներգրավվեն ազդակիր բնակավայրի բնակիչները:

Դաշտային աշխատանքները տևելու են 1-2 օր, որի ընթացքում նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների նվազեցմանը կամ բացառմանը: Մասնավորապես՝

➢ մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ՝ առաջնորդվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով: Աշխատանքներն իրականացնելիս շահագործվելու են սարքավորումներ և մեքենաներ, որոնք հագեցած կլինեն արտանետվող թունավոր գազերը կլանող ֆիլտրերով,

➢ հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հանված հողի բերրի շերտը պահպանվելու է: Բոլոր փորվածքների անցման, նմուշարկման և հետլցման ժամկետը նախատեսվում է 1 օր, ուստի հանվող հողի բերրի շերտը կուտակվելու է փորվածքի անմիջական հարևանությամբ և պահպանման լրացուցիչ միջոցառումների կարիք չի լինի: Մեքենաների տեխնիկական սպասարկումն (յուղերի, քսայուղերի փոխարինում, պահպանում և պահեստավորում վառելիքի լիցքավորում) իրականացվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված ընկերությունների կողմից,

➢ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ, տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,

➢ կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար անթափանց հատակով և պատերով կեղտաջրերի հավաքման բաքի տեղադրում,

➢ շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

➢ խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո,

➢ աշխատանքների իրականացման ընթացքում ապահովվելու է բուսական աշխարհի օբյեկտների, դրանց աճելավայրերի պահպանությունը,

➢ կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,

➢ տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների կամ նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկվելու են միջոցառումներ դրանց պահպանության համար՝ համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել՝

1. Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» N 523-Ն որոշման

պահանջներով՝ հորատանցքերի հորատման ժամանակ ապահովելով գործող էլեկտրահաղորդման գծից անհրաժեշտ հեռավորությունը և աշխատանքների մեկնարկից առաջ համաձայնեցնելով համապատասխան իրավասու մարմնի հետ,

2. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով,

3. Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներով՝ իրականացնելով շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ,

4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով,

5. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արտ Սանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Արտսանդ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան